REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF CULTURE
<<CULTURAL PROJECTS
IMPLEMENTATION UNIT>>
STATE AGENCY

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
<<БЮРО ПО РЕАЛИЗАЦИИ
КУЛЬТУРНЫХ ПРОГРАММ>>
ГОСУДАРСТВЕННОЕ
УЧРЕЖДЕНИЕ

13.03.15թ. N 78-15

Ձեր N______ առ ___________

ՀՀ, ք. Երևան, 0010 Հանրապետության հրապարակ, Կառավարական 3 շենք
РА, Ереван, 0010 площадь Республики, дом правительства N3
Government Building N 3, Republic square, 0010, Yerevan, Republic of Armenia
Tel:(+37410) 58 51 96, 58 51 78 , Fax:(+37410) 585196 E-mail: cultproject@mail.ru

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք (էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում N **«ՀՀՄՆՄԾԻԳ- ՇՀԱՊՁԲ -15/55»** :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև **2015 թ. մարտի 25-ին, ժամը 10:00:**

Հայտերը կբացվեն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով **2015 թ. մարտի 25-ին, ժամը 10:00:**

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը /հավելված N 1 և N 2/ : Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը կայքի միջոցով ներկայացնում է հայտ : Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը / հավելվածներ/ ՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված /տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

-**«Պիտանելիության չափորոշիչ».**

ընթացակարգին մասնակցելու դիմում՝ / Հավելված N 1/,ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

-**«ֆինանսական չափորոշիչ».**

գնային առաջարկ /Հավելված N 2/, որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով մեկ թվով՝ և **կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և չեն ներկայացվում**:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և / կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և / կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Տնօրենի պաշտոնակատար՝ Ե. ԽԵՐԱՆՅԱՆ